ՀՏԴ 94(479.25)

Հ.Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

(1919թ. նոյեմբեր)

Ներկայացվում է Ադրբեջանական բռնապետության դեմ Զանգեզուրի մղած ազատագրական պայքարի՝ պատմական նշանակություն ունեցող մի հերոսական դրվագ: 1919 թ. նոյեմբերին, գեներալ Շիխլինսկու գլխավորած ադրբեջանական զորքերը Զանգեզուրը բռնազավթելու նպատակով, քրդական հրոսակախմբերի զինակցությամբ հարձակվում են Զանգեզուրի վրա: Զանգեզուրյան մարտական ուժերը գնդապետ Արսեն Շահմազյանի գլխավորությամբ ջախջախում են թշնամու զորքը և կասեցնում գավառը Ադրբեջանի գերիշխանությանը հանձնելու Անգլիայի քաղաքականությունն ու փրկում հայ բնակչությանն անխուսափելի կոտորածներից:

Առանցքային բառեր. Հայաստանի Հանրապետություն, Զանգեզուր, Արցախ, Դարալագյազ, Ազգային խորհուրդ, կառավարություն, Ադրբեջան, հերոսամարտ, մարտական ուժեր, հրոսակախումբ:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ամրապնդման ու զարգացման համար հանրապետության սահմանների ընդարձակման խնդիրը ի սկզբանե ունեցել է ռազմավարական նշանակություն: Սակայն հարևան պետությունների և հատկապես Ադրբեջանի հետ շարունակվող մշտական բախումներն ու հանրապետության տարածքում բնակվող թուրք բնակչության պարբերաբար կրկնվող զինված ելույթները դժվարին խոչընդոտների առաջ էին կանգնեցնում հանրապետության կառավարությանը: Դժվարագույնն ու անլուծելին Արցախի ու Զանգեզուրի հարցն էր, որոնց նկատմամբ Ադրբեջանի իշխանություններն ավելի ուժգնությամբ էին շարունակում դրսևորել իրենց զավթողական ձգտումները: Առանց Զանգեզուրի և Արցախի հարցի վերջնական լուծման՝ Հայաստանը չէր կարող հուսալիորեն ապահովել իր սահմանների անսասանությունն ու անձեռնմխելիությունը և, բնականաբար, հարկադրված պետք է լիներ մշտապես պատերազմելու Ադրբեջանի Հանրապետության հետ:

Զանգեզուրին տիրելու Ադրբեջանի նկրտումները ավելի են ուժեղանում հատկապես 1918 թ.դեկտեմբերից սկսած, երբ Շուշիում հաստատվում է անգլիական զինվորական ներկայացուցչությունը:

Հայաստանի Հանրապետությունը Անտանտայի, հետևաբար՝ Անգլիայի դաշնակիցն էր: Ելակետ ունենալով այդ իրողությունը՝ Հայաստանի ղեկավար շրջանները, կարելի է ասել միամտաբար, անվերապահորեն հավատում էին, որ հարևան մահմեդական տերության հետ ունեցած վիճելի հարցերում դաշնակից

տերությունները կպաշտպանեին, Հայաստանին, ու այդ հողի վրա, հատկապես սկզբնական շրջանում, իրենք առանձնապես մեծ ջանքեր չեն գործադրելու սիրաշահել, դիվանագիտական մոտեցում ցույց տալու դաշնակից տերությունների ներկայացուցչության ղեկավարներն:

Իհարկե, դրա համար կային որոշակի հիմքեր: Հայության ու նրան առաջնորդող ուժերի համար, որոնք մեծ խանդավառությամբ էին ընդունել բրիտանական ռազմական ուժերի մուտքը Անդրկովկաս, չափազանց դժվար էր սթափ ու միանշանակ կողմնորոշվել բրիտանական երկդիմի քաղաքականության համատեքստում ու կատարել անհրաժեշտ հետևություններ և առաջնորդվել կենսունակ ու գործուն մարտավարությամբ:

Ի՞նչ հանգամանքներով է պայմանավորված Ղարաբաղի և Զանգեզուրի հարցում գեներալ Թոմսոնի ու նրա հաջորդների դիրքորոշման այդօրինակ կտրուկ փոփոխությունը:

Անգլիացիները Անդրկովկասում առաջնորդվում էին՝ հիմք ունենալով իրենց հետապնդած շահերը, Բաքվի նավթին տիրելու ձգտումը: Այսուհանդերձ, ի տարբերություն հայկական կողմի, Ադրբեջանի ղեկավար շրջանները Անգլիայի դիվանագիտական ու զինվորական ներկայացուցչությունների նկատմամբ դրսևորել են իրենց կարգավիճակին համահունչ ու համակողմանիորեն հաշվարկված մոտեցումներ ու գործել առավել արդյունավետ ու ավելի խորամանկ մարտավարությամբ:

Այս առումով պիտի փաստել, որ գեներալ Թոմսոնի ու նրա հաջորդների դիրքորոշման կտրուկ փոփոխության գործում որոշակի ազդեցություն են ունեցել նաև Թիֆլիսում և Բաքվում հաստատված անգլիացիղեկավար գործիչների նկատմամբ Ադրբեջանի վարչապետ Ֆաթալի Խան-Խոյսկու և նրա գլխավորած վարչա-կազմի դրսևորած դիվանագիտական ճկուն քայլերը, խորամանկ ու սիրաշահող վերաբերմունքը:

«Խան-Խոյսկին,-գրում է պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը,- ճարպկորեն աշխատում էր ակնհայտ դարձնել, որ Բաքվի Ռուսական Ազգային խորհուրդը իրեն պահում է անխոհեմ ու անզիջում, իսկ Թոմսոնը ռուս առաջնորդների հետ անձամբ լեզու գտնելու մի անհաջող փորձից հետո համոզվեց իր մեղադրանքի հիմնավորվածության մեջ: Մինչև դեկտեմբեր ադրբեջանական պետական գործիչները հաջողեցին շահել բրիտանական հրամանատարության համակրանքը: Ժողովրդավարական սկզբունքներին Ադրբեջանի հանրապետության նվիրվածությունը ապացուցելու համար նրանք հիմնեցին ազգային խորհրդարան» [1]:

Շահելով գեներալ Թոմսոնի համակրանքն ու վստահությունը՝ Ադրբեջանի վարչապետ Ֆաթալի Խան-Խոյսկին կարողանում է համոզել գեներալ Թոմսոնին, որի որոշմամբ 1919 թ. հունվարի 15-ին Արցախ-Զանգեզուրի գեներալ-նահանգապետ է նշանակվում դոկտոր Խոսրով-Բեկ Սուլթանովը:

Կովկասում Անգլիայի ներկայացուցչության միակողմանի, հօգուտ Ադրբեջանի վարած քաղաքականությունը դժվարագույն խնդիրներ ու անհանդուրժելի պայմաններ է առաջադրում ՀՀ կառավարությանը՝ Զանգեզուրի և Արցախի հարցում:

Ի պատասխան այդ որոշման՝ հունվարի 26-ին ՀՀ արտաքին գործոց նախարար Ս. Տիգրանյանը «...վճռական բողոք ուղարկեց Ադրբեջանի կառավարութեան՝ յայտարարելով, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը Հայաստանի անբաժան մասն են» [2]:

Այս հարցում անգլիական կողմի դիրքորոշումը միանշանակ էր: Որևէ ուշադրության չարժանացնելով ՀՀ կառավարության բողոքը ու իրենց վճիռը կրկին անգամ հաստատելու նպատակով՝ Բաքվում տեղակայված անգլիական զորքերի հրամանատար գեներալ Շատելվորտը ապրիլի 3-ին հրատարակում է հետևյալ հայտարարությունը. «Անգլիական հրամանատարութիւնը յայտարարում է ի գործադրութիւն Շուշի, Զանգեզուր, Ջիբրայիլ և Ջիվանշիր գաւառների բովանդակ ազգաբնակչութեան, որ՝ 1. Ադրբեջանի կառավարութեան 1919 թ. յունւ. 15 որոշումով դր. Սուլթանովը նշանակւած է Շուշի, Զանգեզուր, Ջիբրայիլ և Ջիվանշիր գաւառների ընդհանուր-նահանգապետ և վայելում է անգլիական հրամանա-տարութեան աջակցութիւնը...» [3]:

Անգլիացի զինվորականների ուղեկցությամբ փետրվարի 10-ին դոկտոր Խոսրով- Բեկ Սուլթանովը ժամանում է Շուշի և անթաքույց հայտարարում, որ ինքը Արցախ է եկել հայերի դիմադրությունը ընկճելու և Ադրբեջանի իշխանությունը Արցախում ու Զանգեզուրում հաստատելու նպատակով:

Արժանվույնս պիտի գնահատել անգլիացիների ու Ադրբեջանի իշխանությունների կողմից բազմիցս կրկնվող ճնշումներին ու սպառնալիքներին հաստատակամորեն դիմակայող արցախահայության անհողդողդ կամքն ու վճռականությունը: Ադրբեջանի և ընդհանուր նահանգապետ Խոսրով-Բեկ Սուլթանովի գերիշխանությունն Արցախում հաստատելուն միտված անգլիացիների ձեռնարկած բոլոր փորձերը տապալվում են՝ հանդիպելով արցախահայության դիմադրությանն ու վճռականությունը:

Ի պատասխան անգլիացիների և Խոսրով-Բեկ Սուլթանովի ներկայացրած վերջնագրի՝ արցախահայությունը փետրվարի 12-ին գումարում է իր հերթական 4-րդ համագումարն ու մերժում իրենց ներկայացրած Ադրբեջանի իշխանություններին ենթարկվելու պահանջը:

1919 թ. ապրիլին Կովկասում Անգլիայի առաքելության ղեկավար գեներալ Թոմսոնին փոխարինում է գեներալ Շատելվորտը:

Գեներալ Շատելվորտի գործուն աջակցությամբ՝ Սուլթանովը, իր իշխանությունը Արցախում և Զանգեզուրում հաստատելու նպատակով, որդեգրում է մի նոր, այն է՝ հայությանը սիրաշահելու ու կեղծ խոստումներով ապակողմնորոշելու ու համոզելու մարտավարություն:

Ժամանակը միանշանակորեն ցույց տվեց, որ իզուր էին համանման ճանապարհով Ադրբեջանի իշխանությունը Արցախում հաստատելուն ուղղված անգլիացիների ու Սուլթանովի գործադրած բոլոր ջանքերը: Հանդիպելով արցախահայության վճռական դիմադրությանը՝ գնդապետ Շատելվորտը ապրիլի 23-ին մեկնում է Շուշի անձամբ պարտադրելու Արցախին՝ ընդունելու Ադրբեջանի իշխանությունը:

Պատմությունը կրկնվում է. արցախահայությունը բնավ ուշադրության չարժանացնելով գնդապետ Շատելվորտի սպառնալիքներն ու պահանջները՝ 1919 թ. ապրիլի 23-ին Շուշիում գումարում է Արցախի հերթական 5-րդ համագումարն ու վճռականորեն մերժում անգլիական հրամանատարության կողմից իրեն ներկայացրած Ադրբեջանի իշխանությունն ընդունելուորոշումը:

Համանման սցենարով ու մարտավարությամբ էին առաջնորդվում անգլիացիներն ու նրանց առաջարկությամբ Արցախ-Զանգեզուրի ընդհանուր նահանգապետի պաշտոնը ստանձնած դոկտոր Խոսրով-Բեկ Սուլթանովը նաև Զանգեզուրում:

Հարկ է նշել, որ Ադրբեջանի զավթողական նկրտումները Զանգեզուրի նկատմամբ առավել ուժգնությամբ են դրսևորվում հատկապես այն ժամանակ, երբ անգլիացիների պահանջով ու հարկադրանքով Անդրանիկն ու նրա գլխավորած զորամասը, ավելորդ ընդհարումների տեղիք չտալու նկատառումով, 1919 թ. ապրիլին թողնում են Զանգեզուրի տարածքը:

Զանգեզուրում Անդրանիկի ու նրա գլխավորած զորամասի ներկայությունը ոչ միայն մեծապես նպաստում է գավառի մարտական ուժերի կազմավորմանն ու բնակչության անվտանգության ապահովմանը, այլև տեղի ինքնապաշտպանական ուժերի հետ միասին կաշկանդող հզոր ուժ էր՝ ընդդեմ Զանգեզուրի նկատմամբ Ադրբեջանի որդեգրած զավթողական նկրտումների:

Քանի որ ՀՀ կառավարությունը դեռևս ի զորու չէր ռազմական ծանրակշիռ ուժեր ուղարկելու Զանգեզուր, ուստի անհրաժեշտ էր Զանգեզուր գործուղել կարող, կազմակերպչական ու ռազմավարական ակնառու կարողություններով օժտված գործիչների, որոնք կկարողանային արժանիորեն փոխարինել Անդրանիկին ու նրա զինակիցներին:

Խոսրով-Բեկ Սուլթանովի Արցախ-Զանգեզուրի նահանգապետի նշանակումն ու այդ հարցում անգլիացիների ադրբեջանամետ դիրքորոշումը չէր կարող չմտահոգել ՀՀ կառավարությանը: Վերոհիշյալ դեպքերի թելադրանքով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը իր ընդունած որոշմամբ (1919 թ. հունվարի 21) հաստատում է Արցախ-Զանգեզուրի ժամանակավոր վարչություն, իսկ կապիտան Արսեն Շահմազյանին նշանակում Արցախ-Զանգեզուրի գեներալ-կոմիսար (գեներալ-նահանգապետ):

Ինչպես սպասվում էր, Արսեն Շահմազյանին Արցախ-Զանգեզուրի գեներալ-նահանգապետի պաշտոնում նշանակելը մեծ խառնաշփոթ է առաջ բերում Ադրբեջանի ղեկավար կազմի և Կովկասում գտնվող Անգլիայի ներկայացուցչության շրջաններում:

Ժամանակը միանշանակորեն ցույց տվեց, որ այդ նշանակումն ավելի քան տեղին էր ու արդյունավետ: Գեներալ-նահանգապետի պաշտոնում Արսեն Շահմազյանը իրեն դրսևորում է որպես ոչ միայն շնորհալի, կարող կազմակերպիչ ու ժողովրդական առաջնորդ, այլև քաջարի և տաղանդավոր զորահրամանատար:

Ինչպես ցույց են տալիս Զանգեզուրում ու Արցախում կատարվող դեպքերի հետագա զարգացումները, Անգլիայի ներկայացուցչությունը և, իհարկե, գլխավոր կոմիսար գեներալ Թոմսոնը չէին կարող համակերպվել Հայաստանի կառավարության որոշման հետ և ճանաչել Ա. Շահմազյանի լիազորությունները որպես Զանգեզուր-Արցախի գեներալ-նահանգապետի:

Նրա հանձնարարությամբ Գորիս ժամանած անգլիացի ու ազերի զինվորականները առաջարկում են Զանգեզուր-Ղարաբաղի Շրջանային խորհրդի անդամ Արշակ Շիրինյանին (Զանգեզուրի Ազգային խորհրդի նախկին նախագահ-Հ. Գ.) և գավառական կոմիսար Նիկոլայ Հովսեփյանին իրենց հետ գնալ Շուշի, այնտեղից Թիֆլիս, ապա Երևան՝ Զանգեզուրի վերաբերյալ մի շարք վիճելի հարցերը քննարկելու ու համապատասխան որոշումներ ընդունելու նպատակով: Միաժամանակ, պահանջում են, որ ՀՀ կառավարության կողմից Զանգեզուրի պետական կոմիսար (գեներալ-նահանգապետ) նշանակված գնդապետ Արսեն Շահմազյանին չորս օրվա ընթացքում հեռանա Զանգեզուրից: Արսեն Շահմազյանը պատասխանում է, որ առանց Հայաստանի կառավարության կարգադրության ինքը չի հեռանա Զանգեզուրից:

Մայիսի 15-ին զինվորականների մեքենաները կանգ են առնում գավառական կոմիսար Ն. Հովսեփյանի տան առաջ և զենքի սպառնալիքով պահանջում՝ իրենց հետ գնալ Շուշի: Այն պահին, երբ Ն. Հովսեփյանը պատրաստվում է նստել մեքենան, անմիջապես վրա են հասնում մի խումբ երիտասարդներ և Ն. Հովսեփյանին խլում զինվորականներից:

Ժողովրդի ճնշմամբ գեներալ Շատելվորտը, անգլիացիներն ու թուրք զինվորականները ձեռնունայն հեռանում են Զանգեզուրից [4]:

Զանգեզուրում ծավալվող դեպքերն աներկբա ցույց են տալիս, որ համանման մարտավարությամբ անհնար է համոզել ու առավել ևս ընկճել մարտական հերոսական ուղի անցած զանգեզուրցիներին: Ադրբեջանական իշխանությունները Զանգեզուրը կարող էին նվաճել միայն բռնությամբ, զենքի ուժով:

Հայաստանի ու Ադրբեջանի հանրապետությունների փոխհարաբերությունների, հատկապես վիճելի տարածքների՝ Նախիջևանին, Զանգեզուրին և Արցախին վերաբերող հարցերի ուսումնասիրությունը միանշանակ հավաստում է, որ Անդրկովկասից դաշնակից զորքերի հեռանալուց հետո Ադրբեջանը տենդագին պատրաստություններ է տեսնում, որ բռնագրավի Նախիջևանի, Զանգեզուրի և Արցախի գավառները, որտեղ կային թուրք սպաների և գործակալների գլխավորությամբ միմյանց հետ սերտ կապեր ունեցող, հայ բնակչության դեմ ապստամբական, զինված գործողություններ նախապատրաստող ոչ բացահայտ գործող բջիջներ:

ՀՀ զինվորական նախարարության հետախուզության բաժնի պետ, կապիտան Տիգրան Դևոյանցի հաղորդմամբ՝ հայկական տարածքները, այդ թվում՝ Նախիջևանը, Զանգեզուրը և Արցախը տիրելու նպատակով Թուրքիայից շարունակաբար Բաքու են գալիս թուրք սպաներ, որոնց աջակցությամբ Ադրբեջանը սկսած 1918 թ. սեպտեմբերի կեսերից, համապատասխան ռազմական պատրաստություններ է իրականացնում, նախապատրաստվում՝ հարձակվելու Զանգեզուրի վրա: Այդ նպատակով գեներալ Շիխլինիսկու գլխավորությամբ կազմավորվում է հետևակային 1-ին դիվիզիան: Նախատեսվում էր, որ Ադրբեջանի բանակի կանոնավոր զորամասերը, որոնց թվում՝ նաև գեներալ Շիխլինսկու գլխավորած դիվիզիան, Թուրքիայի նախկին զինվորական նախարար Էնվեր Փաշայի (նա այդ ժամանակ գտնվում էր Բաքվում-Հ.Գ.) գլխավորությամբ պիտի առաջ շարժվեին ու միանային 1914 թ. սահմանին տեղակայված թուրքական զորամասերի հետ [5]:

Հասկանալի է, որ թուրքական զորքերի հետ միացումը, անկասկած, կուժեղացներ ադրբեջանական բանակը, մանավանդ ավելի դյուրին ու արդյունավետ կլիներ իրականացնել զենք ու զինամթերքի և այլ անհրաժեշտ պարագաների տեղափոխման գործը հատկապես Զանգեզուրը նվաճելուց հետո:

1919 թ. նոյեմբերի սկզբներին Ադրբեջանը կենտրոնացնում է բոլոր զորախմբերը 1-ին դիվիզիայի հրամանատար գեներալ Շիխլինսկու գլխավորությամբ ու երեք ուղղությամբ դիմում հարձակման:

Ադրբեջանական զորքերի ու զանգեզուրյան մարտական ուժերի առաջին բախումը տեղի է ունեցել նոյեմբերի 5-ին, Գորիսի հյուսիսային շրջանում՝ Խոզ-

նավար, Քաչալ սարի և 8484 բարձունքի մերձակայքում: Նոյեմբերի 5-ին ադրբեջանական զորքերին հաջողվում է գրավել Խոզնավար, Բայանդուր գյուղերը, ինչպես նաև Քաչալ սարն ու 8484 բարձունքը: Միաժամանակ, ադրբեջանական զորքերը Գորիսի վրա հարձակվել Դիգ գյուղի ուղղությամբ: Չնայած հակառակորդի մեծաքանակ ուժերի առավելությանը՝ հայկական մարտական ուժերը դիմակայել են ճնշմանը, կանգնեցրել են հարձակումն ու հաջորդ օրն անցնելով հակահարձակման՝ ջախջախել են թուրքական կանոնավոր զորամասերը, որոնք տալով մեծ կորուստներ՝ լքել են մարտադաշտը: Կռիվների ավարտին հայ զինվորները վերցրել են ռազմավար՝ 13 գնդացիր ու մեծ քանակությամբ զինամթերք և բազում այլ պարագաներ: Փախուստի դիմած գեներալ Շիխլինսկին մարտադաշտում թողել 150 գերի ու բազմաթիվ վիրավորներ: Ջախջախված զորամասերի մնացորդները նահանջել են Արցախ: Այդպիսով, այս անգամ կրելով պարտություն, ժամանակավորապես հանգիստ են թողնում Զանգեզուրը զինու զորությամբ նվաճելու խնդիրը, և նոյեմբերի 10-ին Զանգեզուրի գավառում հաստատվում է խաղաղ իրավիճակ:

Այդ ընթացքում Հայաստանի կառավարությունն իր հնարավորության սահմաններում շարունակում է, ճիշտ է, ոչ այնքան շոշափելի, զինական ու ֆինանսական աջակցություն ցույց տալ Զանգեզուրին: Այդ կապակցությամբ Զանգեզուր-Արցախում ՀՀ կառավարության ներկայացուցիչ Ա. Շահմազյանին, որը միաժամանակ ՀՀ կառավարությամբ որոշմամբ համարվում է Զանգեզուր-Արցախի գեներալ-կոմիսար (գեներալ-նահանգապետ) հասցեագրած գրությունում հանրապետության վարչապետը հայտնում է. «Կառավարութիւնը խորին ուշադրութեամբ և գոհունակութեամբ հետևում է Զանգեզուրի արիական ինքնապաշտպանութեանը և ձեռքից եկածն անում է Ձեզ օգնելու համար:

Ձեր թե՛ ռազմական, թե՛ կրթական և թե՛ նյութական կարիքներին գոհացում տալու համար Կառավարութիւնս փոխադրել է ժամանակին դրամ, հրանոթ և ռազմամթերք, որ հուսով ենք, թե ստացած եք արդեն»:

Այդ նույն գրությունում ՀՀ վարչապետն իր գոհունակությունն է հայտնում Զանգեզուրի Ազգային խորհրդի ու Արսեն Շահմազյանի միջև հաստատված համերաշխ համագործակցության կապակցությամբ ու հայտնում, որ Շարուր-Նախիջևանի ժամանակավոր կորստով Զանգեզուրի հետ ՀՀ կապն ու հարաբերությունը պիտի դժվարանան, իսկ ձմռան գալով գուցեև խզվեն, բայց խոստանում է ջանալ ամեն կերպ պահպանելու կապն ու խնդրում, որ նույնն անի նաև Զանգեզուրը:

ՀՀ վարչապետը միաժամանակ հաղորդում է. «Զանգեզուրը ներկայումս ստացել է քաղաքական առաջնակարգ կարևորութիւն: Կարծելով մեզ լիովին

ուժաթափ՝ Ադրբեջանի կառավարութիւնը Շարուրի անցողական հաջողութեամբ շլացած՝ պահանջ էր դրել չեզոք զոն հաստատելու Շարուր-Դարալագեազ-Նախիջևան, ամերկեան նահանգապետի իշխանութեան տակ, առանց խոսք անելու Զանգեզուրի մասին, միանգամայն վստահ, որ անջատելով Զեզ Հայաստանից՝ դիւրութեամբ կարող է Զանգեզուրը նվաճել: Այս առաջարկն ընդունել նշանակում էր անջատվել ձեզանից ու Ղարաբաղից, քանի որ դուք եք կապում Հայաստանը Ղարաբաղին, և Ադրբեջանի իշխանութիւնը հասցնել մինչև Ղամարլու, մի բան, որ չէր կարող անել Կառավարութիւնը» [6]:

Զանգեզուրի հայությունը քաջատեղյակ էր թուրք-ազերի և քուրդ հրոսակախմբերի մարտական կարողություններին ու նրանց հետապնդած նպատակներին: Տարիներ շարունակ հակառակորդի զինական ուժի դեմ մղած կռիվներում զանգեզուրյան ազատամարտիկները հրաշալի մարտական փորձառություն ու կոփվածք էին ձեռք բերել ու գրեթե մշտապես հաղթանակներ տոնել:

ՀՀ զինվորական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական բաժնի պետ կապիտան Մուրադյանի տեղեկացմամբ՝ մինչ Զանգեզուր ներխուժելը, Խոսրով-Բեկ Սուլթանովը, ցանկանալով Զանգեզուրը նվաճել խաղաղ ճանապարհով, երեք լեզուներով գրված թերթիկներ է տարածում, որով Զանգեզուրի հայությանն առաջարկում է միանալ Արցախին, այսինքն՝ ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը:

Կապիտան Մուրադյանի հաղորդմամբ՝ այդ ժամանակ Ադրբեջանում էին գտնվում Էնվեր և Նուրի փաշաները: Նրանք կարևորում ու մեծ նշանակություն էին տալիս Զանգեզուրի գրավմանը, քանի որ դա նշանակալի քայլ կլիներ պանթուրքիզմի շարժման իրականացման ճանապարհին: Էնվեր և Նուրի փաշաների հաշվարկմամբ՝ Զանգեզուրը նվաճելով՝ թուրքական զորքերի գլխավոր շտաբի համար ստեղծվում էր հնարավորություն՝ Պարսկաստան- Ջուլֆա ուղղությամբ կապեր հաստատելու Թուրքիայի և Ադրբեջանի միջև ու շարժվել առաջ:

Կրկին անգամ ստանալով զանգեզուրցիների կտրուկ մերժողական պատասխանը, ադրբեջանական զորքերը գեներալ Շիխլինսկու գլխավորությամբ 1919 թ. նոյեմբերի 7-ին մի քանի ուղղությամբ, քրդական հեծյալ զինախմբերի զինակցությամբ, հարձակվում են Զանգեզուրի վրա: Զուգահեռաբար պիտի զենքի դիմեին նաև Զանգեզուրի թուրք հրոսակախմբերը:

Ըստ Տ. Դևոյանի ներկայացրած զեկուցագրի՝ 1919 թ. սեպտեմբերին Զանգեզուրի վրա ձեռնարկած առաջին հարձակման ժամանակ, մատնվելով անհաջողության, Ադրբեջանը սկսում է ավելի լրջորեն պատրաստվել և հոկտեմբեր ամսին Շուշիի ու Խանքենդի շրջաններում կենտրոնացնում է կանոնավոր զորամասեր, որոնց կազմում մտնում են 1-ին ջիվանշիրյան գունդը, Ղարա-

բաղյան 2-րդ հեծյալ գունդը, Շաքիի 3-րդ հեծյալ գունդը, Զակաթալայի գնդի 2 առանձին գումարտակները, հրետանային 2-րդ լեռնային դիվիզիոնը, 4 հաուբեց հրանոթ և 1 սակրավորական վաշտ: Մուսուլմանական կանոնավոր զորամասերի զինվորների ընդհանուր քանակը Զանգեզուրում հասնում է՝ 6000 հետևակային, 800 հեծյալ, 400 քրդեր, 2 լեռնային ու 4 հաուբեցային հրանոթ: Պարտիզանների (նկատի ունի Զանգեզուրի թուրք բնակչության հրոսակախմբերը, որոնց կանոնավոր զորամասերը հարձակման ժամանակ պիտի զենքի դիմեին ու միանային Շիխլինսկու բանակին-Հ. Գ.) հետ միասին նրանց թիվը կազմում է 20.000 մարդ: Նոյեմբեր ամսվա սկզբներին Ադրբեջանը կենտրոնացնում է բոլոր զորախմբերը 1-ին դիվիզիայի հրամանատար գեներալ Շիխլինսկու գլխավորությամբ ու երեք ուղղությամբ դիմում հարձակման» [7]:

Որպեսզի առավել դյուրությամբ կարողանային հաղթահարել հայ մարտական ուժերի դիմադրությունն ու զավթել Զանգեզուրը, Ադրբեջանի զորքերի հրամանատարությունը որոշել էր գավառի վրա հարձակում ձեռնարկել Շարուր-Նախիջևանից Դարալագյազի ուղղությամբ: Նախիջևանում գտնվող թուրք-ազերի ռազմական ուժերը պիտի անցնեին Դարալագյազով ու ներխուժեին Զանգեզուր: Իսկ այդ ժամանակ Նախիջևանի ամեիկացի նահանգապետը գտնվում էր Նախիջևանում:

Վաշինգտոնում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին գրած ուղերձում (18 նոյեմբերի 1919 թ.), ՀՀ կառավարության վարչապետ Ալ. Խատիսյանը, ներկայացնելով այդ ժամանակահատվածում գնդապետ Հասկելի միջամտությամբ Շարուր-Նախիջևանի, Գողթանի շրջաններում Ամերիկյան նահանգապետություն կազմավորելու իրողությունը, միաժամանակ հայտնում է. «Այս րոպեիս Նախիջևանում է գտնվում Ամերիկեան նահանգապետը, բայց նա բոլորովին անզօր է: Չնայած ամերիկացիների կտրուկ հրամաններին և սպառնալիքներն, Նախիջևանի թրքութիւնը, տաճկական սպաների ղեկավարութեամբ, զինուած թնդանօթներով և գնդացիրներով, արդէն մի քանի շաբաթ է, որ Դարայագեազի հայութեան հետ կռիւ է մղում, աշխատելով անցնել դէպի Զանգեզուր և անմիջական կապ ստեղծել Ադրբեջանի հետ: Կռիւները շարունակւում են Սերս և Մարտիրոս գիւղերի մօտ» [8]:

Վաշինգտոնում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին գրած վերոհիշյալ ուղերձում (18 նոյեմբերի 1919 թ.), ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանը հայտնում է, որ՝ «Միևնոյն ժամանակ Ադրբէջանի զօրքերը մօտ 7000 սւին, հազարաւոր քուրդ և թուրք խուժանի հետ միացած, հռչակաւոր Սուլթանովի և Շիխլինսկու առաջնորդութեամբ, շարժվել են դէպի Զանգեզուր: Այսօրուայ ստացած տեղեկութիւնների համաձայն քաջ Զանգեզուրցիք, 4 օրուայ կատաղի մար-

տեից յետոյ, Գորիսից ոչ հեռու Խօզնավար և Բայանդուր գիւղերի մօտ, մեծ ջարդ են տւել թաթարներին հետ մղել դէպ Ղարաբաղ, թուրքերը թողել են 14 գնդացիր, 150 գերի, ահագին քանակութեամբ մթերք, փամփուտ, վրաններ և այլն: Յույսով ենք, որ Զանգեզուրը հեշտութեամբ չի ընկճւիր ...» [9]:

Ալ. Խատիսյանը այդ գրությունում չի հայտնում կռիվների մանրամասները, իսկ իրականում այդ ժամանակ, ինչպես արդեն նշվել է, ջախջախվել էին ոչ միայն Գորիսի ուղղությամբ Զանգեզուր արշավող թուրք-ազերի զորքերը, այլև անհաջողության էին մատնվել նաև Դարալագյազի ճակատում: Դարալագյազի ճակատում Յապոնի գլխավորած մարտական ուժերը անկոտրում դիմադրությամբ կասեցնում են թուրք-ազերի զորքերի հարձակումներն ու խափանում այդ ուղղությամբ Զանգեզուր ներխուժելու հակառակորդի փորձերը:

Զանգեզուրի Ազգային Խորհուրդը Երևան ուղարկած զանգեզուրյան զինուժի տոնած հաղթանակն ավետող հեռագրում հայտնում է. «Քառօրյա անընդմեջ մղվող կռիվներում հակառակորդի զորամասերը ջախջախվել են, իսկ մնացորդները փախել են Ղարաբաղ: Արդեն երկրորդ օրը բոլոր ուղղություններում հանգիստ է: Այսուհանդերձ, մենք պետք է պատրաստ լինենք դիմագրավելու բոլոր կարգի պատահականությունների ու ունենանք զինամթերքի պաշար: Հակառակորդը միայն Դիդ գյուղի ուղղությունում ծախսել է ավելի քան երկու ու կես միլիոն փամփուշտ: Զանեզուրի ուղղությամբ գործող հակառակորդի հեծյալ գունդը ամբողջովին ոչնչացվել է: Սպանվել մի ռուս սպա, որի աճյունը տեղափոխվել է Գորիս: Վաղը զորամասերը հանդիսավոր կերպով մուտք կգործեն Գորիս: Վերցվել է գերի 150 մարդ: Գյուղացիները հավաքել են մեծ քանակությամբ ավար՝ հաց, շաքար, վրաններ, փամփուշտ և այլն: Ռազմավարի մեծ մասը բաժին է հասել գյուղացիներին» [10]:

ՀՀ վարչապետ Ալ. Խատիսյանի գնահատմամբ՝ «Ծրագրելով Զանգեզուրի գրավումը,-ընդգծում է Ալ. Խատիսյանը,- Բագվի ղեկավարները շատ վատ էին գնահատել հայ ժողովրդի ռազմական ոգին և դիմադրական ուժը: 6 օրվա կատաղի մարտերից հետո Զանգեզուրի մեր մարտիկները ետ մղեցին քուրդ-թաթար ուժերը, որոնք տալով բազմաթիվ սպանված, վիրավոր և գերի, փախան մինչև Ղարաբաղ, թողնելով մերիների ձեռքը մեծ քանակությամբ պատերազմական ավար, 22 գնդացիր և 2 թնդանոթ» [11]:

Այս անգամ դարձյալ տապալվում են Ադրբեջանի հանրապետության կառավարության փայփայած հույսերը՝ զենքի ուժով բռնազավթել Զանգեզուրը: Հայ մարտական ուժերը հերթական անգամ դրսևորում են իրենց անկոտրում մարտական ոգի ու մարտնչելու հրաշալի կարողությունները, և ադրբեջանական բանակը, ինչես արդեն նշված է, մարտադաշտը լքում է դարձյալ պարտված ու խուճապահար:

Օրինական ու ուշագրավ հարց է ծագում. իսկ ինչպիսի՞ ճակատագիր էր սպասում Զանգեզուրի հայությանը, եթե Արսեն Շահմազյանին ու նրա զինակիցներին չհաջողվեր կազմակերպել Զանգեզուրի զինուժն ու պարտության չմատներ գեներալ Շիխլինսկու ու Խոսրով-Բեկ Սուլթանովի գլխավորած զորքին ու թուրք և քուրդ զինյալ հրոսակախմբերին: Որևէ տարակույս, կասկած լինել չի կարող, որ եթե թուրք-ազերի ու քրդերի մարտական ուժերը կարողանային հաղթահարել զանգեզուրյան ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունն ու բռնազավթեին Զանգեզուրը, ապա հայատյաց ու արյունարբու Խոսրով-Բեկ Սուլթանովն ու նրա առաջնորդած ավարառու հրոսակախմբերն անխնա կկոտորեին գավառի հայությանը, և, անտարակույս, հարցականի տակ կհայտնվեր Զանգեզուրի գոյությունը:

Այս առումով անգնահատելի է այդ հաղթանակը, հերոսամարտը, որը նվաճեցին Զանգեզուրի քաջարի մարտիկները իրենց փառապանծ հրամանատարի՝ գնդապետ Արսեն Շահմազյանի գլխավորությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 2005, էջ 174:
2. Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 312:
3. Նույն տեղում, էջ 313:
4. Տե՛ս «Յառաջ», 14.օգոստոսի 1920:
5. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200 ց. 1, գ. 427, թ. 240-241:
6. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50 (մաս 1), թ. 128:
7. ՀԱԱ,ֆ.200, ց. 1, գ. 427, թ. 241-242:
8. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 395, թ. 4:
9. Նույն տեղում:
10. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 271. թ. 237:
11. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 395, թ. 4:

Г.М. ГЕВОРГЯН

ЗАНГЕЗУРСКАЯ ГЕРОИЧЕСКАЯ БИТВА

Представлен имеющий историческое значение героический эпизод освободительной борьбы Зангезура против азербайджанского деспотизма. В ноябре 1919 года азербайджанские войска, возглавляемые генералом Шихлинским, с целью захвата Зангезура в союзничестве с курдскими бандами нападают на него. Зангезурские военные силы под предводительством полковника Арсена Шахмазяна разгромили вражеские войска и тем самым предотвратили проведение политики Англии, а именно - сдачу региона под господство Азербайджана. Таким образом, они спасли армянское население от неизбежной резни.

Ключевые слова: Республика Армения, Зангезур, Даралагяз, Национальное Собрание, правительство, Азербайджан, героическая битва, бой, войско, военная часть, военные силы, банда.

H.M. GEVORGIAN

THE HEROIC BATTLE OF ZANGEZUR

The article presents historically important heroic episode of liberation struggle of Zangezur against the Azerbaijani despotism.In November 1919 the Azerbaijani troops led by General Shikhlinski in order to capture the Zangezur in alliance with Kurdish gangs attacked it. Military forces of Zangezur under the command of Colonel Arsen Shahmazyan defeated enemy forces and thus prevented carrying out British policy, namely, to pass the region under the domination of Azerbaijan. Thus they save the Armenian population from imminent slaughter.

Keywords: Armenia, Zangezur, Daralagyaz, National Assembly, Government, Azerbaijan, heroic battle, battle, army, military unit, military forces, gang.

ՀՏԴ 341.24

Ա.Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ, ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԸՆԴԴԵՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ

Ներկայացվել են Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, դիտարկվել են դրանցում քեմալականների դերակատարումը, այդ պայմանագրերի բացասական դերը հայ ժողովրդի կյանքում:

Առանցքային բառեր. Ալեքսանդրապոլի պայմանագիր, Մոսկվայի պայանագիր, Կարսի պայմանագիր, միջազգային իրավունք:

Թուրքական պատվիրակության ղեկավար Քյազիմ Կարաբեքիրի և Ա. Խատիսյանի միջև Ալեքսանդրապոլում բանակցություններն սկսվեցին 1920թ. նոյեմբերի 29-ին: Հենց սկզբից Կարաբեքիրը պահանջ դրեց, որ Ռուսաստանը մասնակցություն չպետք է ունենա բանակցություններին: 1920թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում՝ Ա. Խատիսյանի և Ք. Կարաբեքիրի կողմից ստորագրվեց պայմանագիր, որն ապօրինի էր: Այդ պայմանագրի համաձայն՝ Կարսի նահանգը և Սուրմալուի գավառը անցնում էին Թուրքիային, իսկ Նախիջևանն ու Զանգեզուրը դրվում էին Ադրբեջանի հսկողության տակ: Հայաստանին իրավունք էր տրվում ունենալ 1500 զինվոր, 20 գնդացիր, 8 թնդանոթ: Չէր սահմանափակվում ժանդարմությունը, զինապարտությունը պարտադիր չէր լինելու: Հայաստանին իրավունք չէր տրվում կառուցել ամրություններ, բերդեր և այնտեղ ծանր թնդանոթներ տեղակայել: Ռուսաստանում նստող Թուրքիայի ներկայացուցիչն իրավունք էր ստանում հետաքննություն կատարել, թե ինչպես են կենսագործվում